ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.07.2017թ.

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
ՍՑ-ԱՄ-2017/32 պաշտոնական ընթացակարգի
միջանկյալ որոշում

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ՍՑ-ԱՄ-2017/32 պաշտոնական ընթացակարգի շրջանակներում քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.07.2017թ. թիվ 03/27-1/13316-17 գրությամբ ներկայացված «Վանգաս» ՍՊԸ-ին և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի»» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, ինչպես նաև ուսումնասիրելով «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից 26.07.2017թ. ներկայացված՝ ՍՑ-ԱՄ-2017/32 պաշտոնական ընթացակարգը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը և 06.07.2017թ. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ ԵԱՔԴ/2539/02/17 քաղաքացիական գործով հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ և 98-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

Կասեցնել Վանգաս» ՍՊԸ-ին և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի»» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը՝ մինչև ԵԱՔԴ/2539/02/17 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ